



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,  
ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ  
**ՀՐԱՄԱՆ**

No 583-Ա/2

« 12 » 05 2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1384-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 5-ի N280-Ն հրամանով հաստատված Հավելվածի 5-րդ կետի 12-րդ ենթակետով և 6-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերով՝

**ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՄ**

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության դպրոցականների 2019-2020 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների մարզային /Երևանի քաղաքային/, հանրապետական փուլերի ժամկետները հաստատելու մասին» N 1384-Ա/2 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) հրամանը լրացնել երկու նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝  
«Մույն հրամանով հաստատված 2-րդ հավելվածի 8-րդ կետով սահմանված՝ քիմիայի առարկայական օլիմպիադան անցկացնել 11-րդ և 12-րդ դասարանցիների համար, իսկ 9-15-րդ տողերով սահմանված առարկայական օլիմպիադաները անցկացնել միայն 12-րդ դասարանցիների համար:

Հանրապետական փուլի մնացած դասարանների սովորողների համար օլիմպիադաները անցկացնել 2020 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին»:

2) հրամանով հաստատված 2-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի՝

Հավելված  
ՀՀ կրթության, գիտության,  
մշակույթի և սպորտի նախարարի  
2020 թվականի մայիսի 5-ի N 583-Ա/2  
հրամանի

« Հավելված N 2»  
ՀՀ կրթության, գիտության,  
մշակույթի և սպորտի նախարարի  
2019 թվականի դեկտեմբերի 17-ի N 1384-Ա/2  
հրամանի

### Հանրապետական փուլի ժամկետները

Հ/Հ	Առարկա	Ժամկետ /2020թ./
1	Մաթեմատիկա	փետրվարի 21-24-ը
2	Ֆիզիկա	փետրվարի 24-27-ը
3	Աստղագիտություն	փետրվարի 27-ը
4	Կենսաբանություն	փետրվարի 28-ից մարտի 2-ը
5	Աշխարհագրություն	մարտի 6-8-ը
6	Պատմություն	մարտի 8-10-ը
7	Ինֆորմատիկա	մարտի 10-11-ը
8	Քիմիա	հունիսի 6
9	Անգլերեն	հունիսի 5
10	Ֆրանսերեն	հունիսի 6
11	Գերմաներեն	հունիսի 5
12	Հայոց լեզու	հունիսի 6
13	Հայ գրականություն	հունիսի 5
14	Ռուսաց լեզու	հունիսի 5
15	Հայոց եկեղեցու պատմություն	հունիսի 6

ՆԱԽԱՐԱՐ

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

X

---